Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/69 ծածկագրով գնանշման հարցման տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14.11.19թ.
ժ.15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Հովսեփյան /գնահատող/

Ա.Հակոբջանյան /գնահատող/

Ա.Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կարապետյան

Բացակայող անդամներ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Սիմոնյան /գնահատող/

Խ.Մնացականյան /բացող/

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Հ.Հովսեփյան)

1.1 «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Վանարխ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Հ.Հովսեփյան)

2.1 «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Որակավորման փաստաթղթերը մասնկացի կողմից ներկայացվել են առանց էլեկտրոնային թվային ստորագրության:

2.1.2 Համանման պայմանագիրը և թիվ 1 համաձայնագիրը ներկայացված են թերի՝ բացակայում են վերջիններիս վճարման ժամանակացույցերը:

2.1.3 Ներկայացված 15.05.2017թ ՀՀ մշակույթի նախարարության հետ կնքված N ՀՀՄՆ-ՊԸԾՁԲ-17/41 պայմանագիրը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված, քանի որ տվյալ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունները ներկայացված են թերի, ինչպես նաև պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող արձանագրությունները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետներին:

2.1.4 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետի որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

(Հ.Հովսեփյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և

առաջարկել «Վանարխ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Հ.Հովսեփյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացումից հետո՝ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ժամը՝ 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ նոյեմբերի 20-ին, ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Հովսեփյան /գնահատող/

Ա.Հակոբջանյան /գնահատող/

Ա.Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կարապետյան

Բացակայող անդամներ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Սիմոնյան /գնահատող/

Խ.Մնացականյան /բացող/

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին

(Հ.Հովսեփյան)

5.1 «Վանարխ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Վանարխ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել ընտրված մասնակից:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հ. Հովսեփյան

_____ Ա. Հակոբջանյան

_____ Ա. Ստեփանյան

_____ Ն. Կարապետյան /քարտուղար/